«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Սովորողի ստեղծագործական երևակայության ծաղկաքաղ



«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Արևելյան դպրոց, 3-2 դասարան

Դասվար՝ Լիլիթ Սահակյան

ԵՐԵՎԱՆ-2022

Բովանդակություն

Ճանապարհորդություն դեպի… ……3

Ընկերություն……5

Խուլի այծերը……7

Զարդարված երկինքը……..9

Երջանիկ սկյուռը……11

Թարս մոլորակը……13

Ճանապարհորդություն դեպի Լուսին……..15

Չարաճճի արևը……17

Թարս ծառը……19

Էշի ականջում քնածը……21

Ճանապարհորդություն դեպի տիեզերք……23

Ճնճղուկի նամակը……25

Բանջարեղենի ծնունդը……27

Երևակայական ընկերները……..29

Փաթիլի կախարդանքը……...31

Փշատերևի հեքիաթը……33

Ճանապարհորդություն դեպի …

Քայլում էի փողոցով: Մին էլ հանկարծ ընկա փոսի մեջ: Հայտնվեցի մի անծանոթ միջավայրում: Ամեն տեղ անցքեր էին, խոռոչներ, թունելներ, մի խոսքով՝ մի մեծ լաբիրինթ: Նկատեցի նաև պահեստներ, որտեղ լիքը ուտելիքների մնացորդներ կային: Բոլոր կողմերում վազվզում էին մոխրագույն, փոքրիկ, երկար, բարակ պոչերով կենդանիներ:



Կռահեցի՞ք, թե որտեղ եմ եղել, և ի՞նչ կենդանիներ էին…

Մերի Սարուխանյան

Հարցեր

1. Կռահեցի՞ր, թե որտեղ եմ եղել, և ի՞նչ կենդանիներ էին:

2. Ի՛նքդ նկարիր պատմությունը:

Ընկերություն

Մի օր միայնակ շունը մոտեցավ ծառին, որ ընկերանա անտառի ամենաշքեղ ծառի հետ: Երկար զրուցեցին, և շունը փորձեց շոյել ծառին: Բայց ծառը ծակեց շանը. դե որովհետև փշեր ուներ: Իսկ ծառն օրորվելով հասկացրեց, որ փշերը միայն դրսից են, իսկ ներսում տաք բույն ունի, որ կարող է տաքացնել և գիշերելու տեղ տալ:



Զախարյան Մհեր

Հարցեր

1. Պատմի՛ր ընկերոջդ մասին։

2. Նկարի՛ր նրան։

Խուլի այծերը

Մի անգամ մի խուլ պառավ փնտրում էր իր այծերին: Հանդիպում է մի մարդու, որը նույնպես խուլ էր: Պառավը հարցնում է նրան.

- Չե՞ս տեսել այծերիս:

Բայց քանի որ մարդն էլ էր խուլ, այլ բան է պատասխանում: Ասում է.

- Այո՛, վատ եղանակ է,- ու ձեռքով վերև է ցույց տալիս:

Պառավին թվում է, թե ասում է՝ սար են բարձրացել: Պառավը բարձրանում է սարը և գտնում է այծերին: Բայց մինչ կբերեր, մի լավ թրջվում են անձրևի տակ:



Միեր Զախարյան

Հարցեր

1. Ի՞նչ եղավ հետո: Շարունակի՛ր:

2. Նկարի՛ր քո հորինած պատմությունը:

Զարդարված երկինքը

Լինում է, չի լինում մի Ձմեռ պապ: Ամանորի բոլոր գործերն անելուց հետո երբ պարկում էլ նվեր չի մնում, մտածում է բարձրանալ տիեզերք և զարդարել այնտեղ: Իսկույն հայտնվում է տիեզերքում: Տիեզերքի կենտրոնում տեղադրում է լուսինը: Տեսնում է, որ քիչ է, պարկից հանում է աստղերը, փռում ամենուր: Տիեզերքը միանգամից լուսավորվում է: Դրանից հետո երկինքը միշտ զարդարված է:

Երբ վերև նայեք, հիշե՛ք, թե ում շնորհիվ է երկինքը փայլում:



Մհեր Զախարյան

Հարցեր

1. Քո կարծիքով՝ ո՞վ է զարդարում երկինքը։

Նկարի՛ր քո աստղազարդ երկինքը։

Երջանիկ սկյուռը

Տերևաթափ էր: Անտառը գույնզգույն էր դարձել: Արևը հեքիաթային կերպով ոսկեզօծել էր ծառերի ճյուղերը: Ամեն տարի այդ օրը փշատերև ծառը շքեղ զարդարվում էր ու գազաններին հավաքում իր շուրջը: Տխուր էր միայն սկյուռը:Նա նստել էր իր բնում և կաղին էր ուտում: Բոլոր կենդանիները՝ արջը, նապաստակը, ոզնին և մյուսները, մտածում էին, թե ինչպես ուրախացնեն սկյուռիկին: Նրանք որոշում են կանչել անտառի բոլոր թռչուններին, որ երգեն սկյուռի համար: Միասին երգում են սկյուռիկի սիրելի երգերը և նրան հրավիրում պարի: Բոլորը շուրջպար են բռնում, և սկյուռիկը երջանկանում է, որ ունի այդքան լավ ընկերներ:



Մարի Ազիզյան

Հարցեր

1. Ի՞նչ են խոսում տերևները։
2. Նկարի՛ր տերևաթափ։

Թարս մոլորակը

Երկիր մոլորակն ունի մի ընկեր: Այն ամենափոքր մոլորակն է՝ Ռետիպույը (Յուպիտերը): Այստեղ կենդանիները թռչում են: Թռչուններն արածում են, մարդիկ ապրում են օվկիանոսներում ու ծովերում: Նրանք ձկների նման շնչում են խռիկներով: Այստեղ երկինքը վարդագույն է, ջուրը դեղին է, իսկ հողը՝ կապույտ: Ռետիպույում մարդիկ ժպտալու փոխարեն լացում են, իսկ լացելու փոխարեն՝ բարձր ծիծաղում: Այստեղ ջուրը ուտում են, իսկ հացը՝ խմում: Սակայն այս մոլորակում միայն մի բան թարս չէ: Փորձի՛ր գուշակել:



Ավագյան Հրաչ

Հարցեր

1. Ի՛նքդ պատմի՛ր թարս մոլորակի մասին։

2. Նկարի՛ր թարս մոլորակ։

Ճանապարհորդություն դեպի Լուսին

Իմ ճանապարհորդությունը դեպի Լուսին սկսվեց ուշ գիշերով: Մուգ կապույտ երկինքը լի էր աստղերով: Լուսինը լուսավորում էր երկար ճանապարհս՝ կանչելով դեպ իրեն: Առանջինն ինչ տեսա՝ հասնելով Լուսին, աննկարագրելի կապույտ երկինքն էր, ուր լողում էին տարբեր չափերի ու ձևերի աստղեր ու մոլորակներ: Լուսնի վրա բազում հրաբուխներ կային, որոնց վրայից շատ զվարճալի էր ցատկելը, քանի որ Լուսնի վրա չի գործում ձգողության օրենքը: Թռչկոտում ու գլուխկոնծի էի տալիս մինչև առավոտ: Առավոտյան պետք է հետ գայի. մայրիկս սպասում էր, որ գնայինք դպրոց, բայց գիշերը նորից եմ գնալու, հավես էր…



Մարի Ազիզյան

Հարցեր

1. Պատմի՛ր քո ճանապարհորդության մասին:

2. Ինչո՞ւ է երկինքը կապույտ:

Չարաճճի արևը

Արևը պարապ-սարապ ման էր գալիս երկնքում։ Որոշեց չարաճճիություն անել։ Նա հագավ աստղի շորերն ու գիշերը թաքուն երկինք բարձրացավ։ Ո՛չ մի աստղ, ո՛չ մի մոլորակ նրան չճանաչեց։ Արևը հիացավ ու շատ հավանեց տիեզերքը գիշերով։ Որոշեց մեկ-մեկ չարաճճիություն անել ու հրճվել։

Մարի Ազիզյան

Հարցեր

1. Պատմի՛ր քո չարաճճիության մասին։

2. Նկարի՛ր չարաճճի արևին։

Թարս ծառը

Լինում է, չի լինում, մի թարս ծառ է լինում: Նա գլխիվայր շրջված էր: Տերևները ճյուղերի վրա թարս էին աճում: Բացի նրանից, որ թարս էր աճում, նաև առեղծվածային էր՝ ով հայտնվում էր նրա կողքին, ակամա գլխիվայր էր շրջվում: Ծառի շուրջն առաջացել էր շրջված աշխարհ՝ շրջված խոտերով, ծաղիկներով, նապաստակներով, ոզնիներով, սնկերով, կաղիններով: Անգամ անտառապահն էր շրջված քայլում, իսկ նրա բերանից դուրս եկած բառերի տառերը փոխում էին իրենց դասավորությունը: Այդպես ծնվեցին լիքը նոր բառեր, որոնք մենք հիմա գործածում ենք:



Մարի Ազիզյան

Հարցեր

1. Ճի՛շտ կարդա նկարի թարս բառերը։

2. Ի՛նքդ փորձիր նոր բառեր հորինել։

Էշի ականջում քնածը

Հովիվը հոտը սարն էր տարել: Նստել էր մի քարի վրա՝ հանգստանալու, ու մտքերով հասել էր աշխարհի ծայրը: Այստեղ էլ աչքը կպել էր ու քնել: Մեկ էլ վեր թռավ կնոջ ձայնից.

-Ա՛յ մարդ, էշի ականջում քնե՞լ ես: Էն գայլը ոչխարը տարավ:

Հովիվը գլուխը բռնեց ու վազեց իր ոչխարներին գտնելու:



Ազիզյան Մարի

Հարցեր

1. Պատմության համար նոր վերնագիր մտածի՛ր։

2. Ի՞նչ եղավ հետո…

Ճանապարհորդություն դեպի տիեզերք

Կար –չկար մի աղջիկ։ Նա որոշել էր դառնալ տիեզերագնաց։

Աղջիկն ամեն օր պատկերացնում էր, թե ինչպես է թռչում Լուսին։ Ու քանի դեռ այդ երազանքն անկատար էր, նա վճռեց իր սենյակում կազմակերպել փոքրիկ ճամփորդություն։

Աղջիկը կարդաց տարբեր գրքեր տիեզերքի մասին։ Նա պատերին ամրացրեց մոլորակների ու Լուսնի նկարները։ Նկարեց իր երազանքների տիեզերանավն ու դա էլ փակցրեց առաստաղին։ Աղջիկը դրեց ականջակալները , նստեց բազկաթոռին ու երևակայեց, որ ճանապարհորդում է դեպի Լուսին։

Նա գիտի, որ երբ մեծանա, անպայման կհայտնվի տիեզերքում։ Չէ՞ որ բոլոր երազանքները կատարվում են , եթե դրա համար ջանք չենք խնայում։

Գևորգյան Սոնա

Հարցեր

1. Պատմի՛ր քո երազանքի մասին։

2. Նկարի՛ր տիեզերքը։

Ճնճղուկի նամակը

Բարև՛:

Ես պստլիկ ճնճղուկ եմ: Ես մրսում եմ ու շատ սոված եմ: Բարի՛ մեծեր ու երեխաներ, խնդրում եմ, որ ինձ ու իմ հարազատների համար տնակ պատրաստեք, ծառերից կախեք: Մենք ձմռանը շատ ենք մրսում: Ուտելիք էլ չենք գտնում: Շատ ենք ուրախանում, երբ մեզ համար հաց եք թողնում դրսում: Շատ շնորհակալ ենք:

Սիրով՝ մի պստլիկ ճնճղուկ:



Բաղդասարյան Սյուզն

Հարցեր

1. Փորձի՛ր պատասխանել նամակին։

2. Մի նամակ գրի՛ր։

Բանջարեղենի ծնունդը

Բանջարինա քաղաքում, մի ընտանիքում ապրում էին տիկին Ծաղկակաղամբը, պարոն Պղպեղը և իրենց փոքրիկ տղա Վարունգը: Մի օր փոքրիկ վարունգը բակում խաղում էր: Հանկարծ եկավ չար Սոխը և Վարունգից խլեց իր սիրելի խաղալիք կաղամբիկը և փախավ: Փոքրիկ վարունգը շատ էր տխրել: Նա գնաց և Սուպեր ճակնդեղին պատմեց ամեն ինչ: Սուպեր ճակնդեղը մեկ ակնթարթում ներկեց Սոխին, և նա դարձավ վարդագույն: Բոլորը մի լավ ծիծաղեցին Սոխի վրա: Սոխը վերադարձրեց փոքրիկի խաղալիքը: Այդ օրվանից ծնվեց սոխի ևս մի գույն՝ վարդագույնը:



Գոհար Սարգսյան

Հարցեր

1. Նկարագրի՛ր Բանջարինա քաղաքը:

2. Նկարի՛ր քո սիրելի բանջարեղենը:

Երևակայական ընկերները

Մուկն ու կատուն ապրում էին մի աղջկա տանը՝ նկարի տակ։ Նրանք մտերիմ էին։ Նրանք նաև երևակայական էին։ Աղջիկը մի օր նկարը հանեց և տեսավ նրանց։ Հարցրեց.

- Այս ի՞նչ բան է։

Իսկ կատուն ասաց.

- Մենք երևակայական ենք, թե չէ ինչպե՞ս էինք տեղավորվելու և համերաշխ ապրելու։

Աղջիկը մտածեց-մտածեց և որոշեց թղթի վրա նկարել պանիր և ձուկ։ Կատուն կերավ պանիրը, իսկ մուկը՝ ձուկը։ Նրանք հասկացան, որ մտերիմ ընկերները հավասար բաժանում են ամեն ինչ։

Աղջիկն ուրախացավ, որ երևակայական ընկերությունը դարձավ իսկական։



Պողոսյան Սուրեն

Հարցեր

1. Ի՞նչ է ընկերությունը:

2. Նկարի՛ր մկան և կատվի ընկերությունը:

Փաթիլի կախարդանքը

Դրսում ձմեռ էր։ Աղջիկը նստած նայում էր պատուհանից դուրս։ Նայում էր, թե ինչպես են ձյան փաթիլները թափվում երկնքից։ Հանկարծ մի գեղեցիկ, փայլուն փաթիլ կպավ պատուհանին և ժպտաց աղջկան։ Աղջիկը բացեց լուսամուտը, և փաթիլը նստեց նրա ձեռքի ափին։ Աղջիկը հասկացավ, որ փաթիլը սովորական չէ, այլ կախարդական։ Նա խնդրեց փաթիլին, որ իրեն բերի տարբեր գրքեր։ Փաթիլը ժպտաց և անհետացավ։ Երբ աղջիկը շրջվեց, տեսավ սեղանին լիքը գրքեր։ Նա շատ ուրախացավ։

Մանուկյան Գայանե

Հարցեր

1. Պատմի՛ր քո ցանկությունների մասին:
2. Հորինի՛ր ձմեռային հեքիաթ:

Փշատերևի հեքիաթը

Փշատերև ծառը ձմռանը դարձավ սիրուն, գեղեցիկ տոնածառ: Նա շատ-շատ շքեղ էր: Նրան սիրում էր շոյել Ձմեռ պապիկը, իսկ սկյուռը սիրում էր պարել փշատերևի շուրջը և լսել նրա պատմած հեքիաթները անտառի մասին:

Մի օր տոնածառը հիվանդացավ: Ոչ ոք չգիտեր նրա հիվանդության պատճառը: Արդեն մեկ տարի նա չէր պատմում հեքիաթ սկյուռի, ոզնու, նապաստակի համար: Օրերը ցրտում էին, կաղինը քիչ-քիչ վերջանում էր: Սկյուռը լաց էր լինում: Մեկ էլ հանկարծ նա տեսավ իր արցունքները գետնին և հիշեց, որ փշատերևը ծարավ է: Վազեց ջուր բերելու: Ծառը խմեց, խմեց, խմեց ու առողջացավ: Պարզվեց, որ նա ծարավ էր: Ջուրը կախարդական ուժ տվեց նրան և կենդանացրեց:

Հաջորդ օրը գազանները փշատերևին ներկեցին ոսկեզօծ գույներով, ուրախացան, երգեցին ու պարեցին:

Լուկաս Պատարայա

Ստեղծագործությունների հեղինակներ

1. Ազիզյան Մարի
2. Ավագյան Հրաչ
3. Բաղդասարյան Սյուզն
4. Մանուկյան Գայանե
5. Պատարայա Լուկաս
6. Պողոսյան Սուրեն
7. Սարգսյան Գոհար
8. Սարուխանյան Մերի
9. Գևորգյան Սոնա
10. Զախարյան Միեր

Խմբագիր, սրբագրիչ՝ Լիլիթ Սահակյան

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Mskh.am